

«Հաստատված է»
«Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ հիմնադիր
«Անիվ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի
2025թ. մայիսի 19-ի թիվ 2 նիստում



Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Անահիտ Նավասարդյան

«ԱՆԻՎ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱՑԻՈՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ք. Երևան – 2025թ.

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Անիվ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ՈւՎԿ) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման» սույն կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) կարգավորում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի գործընթացի հետ կապված հարաբերությունները ՈւՎԿ-ում: Սույն կանոնակարգը գործում է համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք):

1.2. Սույն կանոնակարգը սահմանում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ՈւՎԿ-ի կողմից վարվող քաղաքականությունը, իրականացվող այն պարտադիր միջոցառումները և ընթացակարգերը, որոնք կբացառեն ՈւՎԿ-ի միջոցով փողերի լվացումն ու ահաբեկչության ֆինանսավորումը, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկողության և պատասխանատվության միջոցների կիրառման հարցերը: Սույն կանոնակարգով, մասնավորապես, սահմանվում են ՈւՎԿ-ի կառավարման մարմինների, այդ թվում՝ ներքին դիտարկումների մարմնի գործառույթների և դրանց իրականացման կարգի նվազագույն պահանջները, սույն կանոնակարգի փոփոխման կարգը, ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ՈւՎԿ այլ ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն չափանիշները, ՓԼ/ԱՖ ռիսկի չափանիշները ու դրանց որոշման կարգը, հաճախորդի նույնականացման նվազագույն կանոնները, հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ և պարզեցված) ուսումնասիրության կանոնները, ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ՈւՎԿ կողմից փաստաթղթերի (տեղեկատվության) հավաքագրման, հաշվառման ու պահպանման կանոնները, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու հետ կապված դիտարկման ընթացքին (վերլուծության կատարմանը) ներկայացվող նվազագույն պահանջները, ՈւՎԿ-ի կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների (գործարար հարաբերությունների) մասին ՀՀ կենտրոնական բանկին հաշվետվության տրամադրման ձևերը, ժամկետները և կարգը, ՈւՎԿ-ի ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու աշխատակիցների ընտրության, ուսուցման, որակավորման կանոնները,:

1.3. Սույն կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

գույքը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված գույքն է.

փողերի լվացումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքն է.

ահաբեկչության ֆինանսավորումը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 217.1-ին հոդվածով նախատեսված արարքն է.

հաշվետվություն տրամադրող անձ՝ ՈւՎԿ-ն,

հաճախորդը՝ ՈւՎԿ-ի հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձն է, ինչպես նաև այն անձը, որն ՈւՎԿ-ին առաջարկում է կատարել կամ կատարում է միանգամյա գործարք.

իրական շահառուն՝ ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունը իրականացվում է և (կամ) որին պատկանում է իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդը կամ այն անձը, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունն իրականացվում է: Իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում նաև այն ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը: Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև այն ֆիզիկական անձը, որը՝

ա. քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) քսան և ավելի տոկոսին (բացառությամբ Արժեթղթերի շուկայի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները կամ

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

գործարքը ՌԻՎԿ-ի և հաճախորդի կամ լիազորված անձի միջև, ինչպես նաև հաճախորդի կամ լիազորված անձի և այլ անձի միջև գործարքն է, որը կատարվում է ՌԻՎԿ միջոցով կամ հանդիսանում է ՌԻՎԿ ուսումնասիրության (դիտարկման) առարկա: Գործարք կարող է համարվել նաև որոշակի գործարքի հիման վրա կամ դրա արդյունքում իրավունքներ և պարտականություններ առաջացնող, փոփոխող կամ դադարեցնող յուրաքանչյուր գործողություն:

միանգամյա գործարքը գործարք է, որի արդյունքում պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում, և (կամ) որը գործարար հարաբերության հաստատում չի ենթադրում:

փոխկապակցված միանգամյա գործարքները միևնույն կողմի մասնակցությամբ միատեսակ բնույթի միանգամյա գործարքներն են, որոնք կատարվում են 24 ժամվա ընթացքում:

գործարար հարաբերությունը հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններն են, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով: Գործարար հարաբերությունը չի ներառում հաշվետվություն տրամադրող անձի այն գործունեությունը, որի շրջանակներում հաշվետվություն տրամադրող անձը սեփական կարիքների համար իրականացնում է տվյալ տեսակի հաշվետվություն տրամադրող անձանց համար օրենքով սահմանված գործունեությունից տարբեր այլ գործունեություն:

ավագ ղեկավարությունը ՌԻՎԿ-ի այն մարմինը կամ աշխատակիցն է, որն իրավասու է ՌԻՎԿ-ի անունից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հարցերով որոշումներ կայացնելու և գործողություններ կատարելու:

ներքին դիտարկումների մարմինը փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող ՌԻՎԿ ստորաբաժանումը կամ աշխատակիցն է:

լիազոր մարմինը ՀՀ կենտրոնական բանկն է:

լիազորված անձը հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողությունների իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքով հաճախորդի կողմից տրված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձն է:

իրավաբանական անձը Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը կամ հիմնարկն է, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորումը:

հաճախորդի գործարար բնութագիրը հաճախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև հաճախորդի

գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ ՌԻՎԿ տեղեկությունների (պատկերացումների) ամբողջությունն է.

գործարքի մյուս կողմը հաճախորդի կողմից իրականացվող գործարքի այլ մասնակից է, որը տրամադրում (փոխանցում) կամ որին հասցեագրվում է գործարքից բխող գույքը.

հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը ՌԻՎԿ կողմից հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց է, որը ներառում է՝

ա. հաճախորդի (այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի) նույնականացումը և ինքնության ստուգումը,

բ. գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզումը,

գ. գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը.

ռիսկը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վտանգավորության և դրա հավանականության մասին վկայող հանգամանք է, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ այլ չափանիշների.

բարձր ռիսկի չափանիշը օրենքով, լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև ՌԻՎԿ ներքին իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին, այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ) հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդները կամ իրական շահառուները, անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից են, բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն: Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում բարձր ռիսկի չափանիշի առկայությունը լիազոր մարմնի նախատեսած դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ.

հաճախորդի հավելյալ ուսումնասիրությունը հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառումն է, որի դեպքում, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, անհրաժեշտ է նաև առնվազն՝

ա. ստանալ ավագ ղեկավարության հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ,

բ. ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,

գ. հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրել գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը,

դ. քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում իրականացնել ընթացիկ հավելյալ դիտարկում.

ցածր ռիսկի չափանիշը օրենքով կամ լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր հավանականության մասին, այդ թվում՝ փողերի լվացման և

ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները, պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, պետական կառավարչական հիմնարկները, բացառությամբ չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող մարմինների կամ կազմակերպությունների: Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում ցածր ռիսկի չափանիշի առկայությունը լիազոր մարմնի նախատեսած դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ.

հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը ՈՒՎԿ կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառումն է, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները՝

ա. ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

բ. իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն),

գ. պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ լրիվ պաշտոնական անվանումը.

քաղաքական ազդեցություն ունեցող անձը պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի հանրային գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

ա. պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,

բ. խորհրդարանի անդամները,

գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,

դ. կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,

ե. դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,

զ. քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,

է. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,

ը. տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,

թ. միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները.

չհամապատասխանող երկիրը կամ տարածքը լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշաճ կիրառող արտասահմանյան երկիրը կամ տարածքն է.

կենսական շահերի կենտրոնը այն վայրն է, որտեղ կենտրոնացած են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահը կարող է դրսևորվել այն վայրում,

որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը և (կամ) նրա ընտանիքը, որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (մասնագիտական) գործունեության իրականացման վայրը.

կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը այն գործարքը կամ գործարար հարաբերությունն է, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից.

կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև ՌԻՎԿ ներքին իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հնարավորության մասին վկայող իրավիճակը կամ ազդակն է.

տիպաբանությունը լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև ՌԻՎԿ ներքին իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացմանը կամ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գործողությունների և (կամ) քայլերի տրամաբանությունն ու հաջորդականությունը նկարագրող հնարավոր սխեմա է.

ահաբեկչության հետ կապված անձը ցանկացած անհատ ահաբեկիչ, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության փորձի մեջ կասկածվող, մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձ կամ ահաբեկչական կազմակերպություն է, նրանց հետ փոխկապակցված անձ, նրանց կողմից կամ նրանց անունից կամ նրանց ցուցումների ներքո գործող կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց պատկանող կամ նրանց կողմից կառավարվող այլ անձը, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ լիազոր մարմնի հրապարակած ցանկերում.

գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքն է.

գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժումը գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման համար նախատեսված գործողություններ չիրականացնելն է.

գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցումը գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատումն է.

գույքի սառեցումը ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքն է, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելքը, ինչպես նաև որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելքը.

արժեթղթերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված արժեթղթերը, այդ թվում՝ պարտատոմսը, չեկը (չեկային գրքույկը), մուրհակը (վճարագիրը), բաժնետոմսը, կոնոսամենտը, բանկային վկայագիրը (բանկային գրքույկը, բանկային սերտիֆիկատը), պահեստային վկայագիրն է և այլ օրենքներով սահմանված արժեթղթերը.

կեղծ («շել») բանկը բանկն է, որը հիմնադրված, գրանցված, լիցենզավորված կամ այլ կերպ ինկորպորացված լինելով որևէ երկրում, իրականում դրա տարածքում չի կառավարվում կամ չունի փաստացի գտնվելու կամ գործունեության վայր, և որը փոխկապակցված չէ

արդյունավետ համախմբված վերահսկողության ենթակա, կարգավորվող գործունեություն իրականացնող ֆինանսական հաստատությունների որևէ խմբի հետ.

Ֆինանսական խումբը խումբ է, որի կազմում առկա է այնպիսի իրավաբանական անձ, որը ղեկավարում և համակարգում է խմբի անդամ՝ օրենքով նախատեսված գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց (այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի՝ ամբողջ խմբի համար կիրառելի քաղաքականություն և ընթացակարգեր, իրականացնող մասնաճյուղերի և (կամ) ներկայացուցչությունների) գործառույթները՝ խմբի մակարդակով արդյունավետ, համախմբված վերահսկողություն իրականացնելու նպատակով:

գանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձը ցանկացած անձ է, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի՝ գանգվածային ոչնչացման զենքի տարածման և (կամ) դրա ֆինանսավորման համար թիրախային ֆինանսական պատժամիջոցներ սահմանող բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում:

ԳԼՈՒԽ 2. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

2.1. ՈՒՎԿ-ն օրենքով, սույն կանոնակարգով և այլ ներքին իրավական ակտերով սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում իր հաճախորդների կողմից իրականացվող կասկածելի գործարար հարաբերությունները և գործարքները բացահայտելու ու կանխելու ուղղությամբ, ինչպես նաև կատարում օրենքով սահմանված այլ պարտականություններ:

2.2. ՈՒՎԿ-ն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով լիազոր մարմնին է ներկայացնում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ՝ օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված տեղեկությունները, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները:

2.3. ՈՒՎԿ լիազոր մարմնին հաշվետվություն է ներկայացնում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության և (կամ) պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ:

2.3.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը տրամադրվում է ՈՒՎԿ կողմից՝ անկանխիկ գործարքների գծով, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն դրամը, ինչպես նաև կանխիկի հետ կապված գործարքների գծով, որոնց գումարը գերազանցում է 5 միլիոն դրամը:

2.4. Սույն հոդվածի 2.3 մասով սահմանված հաշվետվությունների տրամադրման պարտականությունը ՈՒՎԿ մոտ առաջանում է լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

2.5. ՈՒՎԿ-ին, նրա աշխատակիցներին արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկատվություն է տրամադրվում լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց հայտնել հաշվետվության կամ այլ տեղեկատվության տրամադրման փաստի մասին:

2.6. 2.3.1 կետով սահմանված գործարքների վերաբերյալ հաշվետվության տրամադրման պարտականությունից ազատելու դեպքերը, ըստ գործարքների տեսակների, դեպքերի և (կամ) սահմանաչափերի, սահմանում է լիազոր մարմինը:

2.7. ՈՒՎԿ գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, պետք է որակի որպես կասկածելի և սույն Օրենքով նախատեսված՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրի լիազոր մարմնին, եթե կասկածում է կամ բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված

գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ, կամ օգտագործվել է, կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:

2.8. ՌԻՎԿ պետք է դիտարկի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու և Օրենքով նախատեսված՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրելու հարցն այն դեպքում, երբ դիտարկվող իրավիճակը ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին, կամ ՌԻՎԿ համար ակնհայտ է դառնում, որ թեև կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը չի բխում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներից կամ տիպաբանություններից, դրա կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:

2.9. 2.8. կետով սահմանված դեպքերում, եթե դիտարկման արդյունքում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակվում, և Օրենքով նախատեսված՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն չի տրամադրվում լիազոր մարմնին, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում ու պահպանվում են սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

2.10. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը իրականացվում է ներքին դիտարկումների մարմնի կողմից՝ Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

2.11. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը սկսվում է ինչպես ներքին և արտաքին ազդակների ստացման դեպքում, այնպես էլ ներքին դիտարկումների մարմնի նախաձեռնությամբ, բոլոր այն դեպքերում, երբ.

2.11.1. առկա է հնարավոր համընկնում հաճախորդի կամ գործարքի մյուս կողմի տվյալների և ահաբեկչության հետ կապված անձանց կամ լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների միջև.

2.11.2. դիտարկվող իրավիճակը ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին.

2.11.3. կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով.

2.11.4. առկա են ներքին իրավական ակտերով սահմանված՝ գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին վկայող այլ հանգամանքներ:

2.12. Ներքին ազդակներ են համարվում հաճախորդներին սպասարկող աշխատակիցների, ՌԻՎԿ կառավարման մարմինների, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների կողմից ներքին դիտարկումների մարմնին ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում փոխանցված ազդակները:

2.13. Արտաքին ազդակներ են համարվում լիազոր մարմնից, իրավասու մարմիններից, այլ հաշվետու անձանցից, օտարերկրյա գործընկերներից, ինչպես նաև տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից ստացված ազդակները:

2.14. Ներքին դիտարկումների մարմինը սույն կարգի 2.11.1 ենթակետով սահմանված այն դեպքերում, երբ առկա է հնարավոր համընկնում.

2.14.1. ահաբեկչության հետ կապված անձանց նույնականացման տվյալների հետ, անմիջապես իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, Օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին ներկայացնում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն և ձեռնարկում Օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված միջոցառումները.

2.14.2. լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների հետ, հանձնարարականներում նշված ժամկետներում իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, կատարում է հանձնարարականներով սահմանված գործողությունները:

2.15. Ներքին դիտարկումների մարմինը սույն կարգի 2.11.2. -2.11.4.-րդ ենթակետերով սահմանված դեպքերում ողջամիտ ժամկետում կատարում է համակողմանի վերլուծություն՝ օգտվելով հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքված և լրացուցիչ ձեռք բերվող տեղեկատվությունից, անհրաժեշտության դեպքում ճշտումներ է կատարում լիազոր մարմնի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ և եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը որակում է որպես կասկածելի, Օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին ներկայացնում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նաև ձեռնարկում է Օրենքով նախատեսված այլ միջոցառումներ:

2.16. Գործարար հարաբերությունը կամ գործարքը կարող է համարվել կասկածելի, եթե՝

2.16.1. հաճախորդը ՌԻՎԿ-ին առաջարկում է կնքել (հաստատել) կամ նրա հետ կնքում (հաստատում) է այնպիսի գործարք (գործարար հարաբերություն), որը թեկուզև համապատասխանում է օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին, սակայն տվյալ գործարքով (գործարար հարաբերությամբ) հնարավոր չէ պարզել հաճախորդի ինքնությունը կամ ստանալ տվյալ գործարքի (գործարար հարաբերության) կնքման կամ իրականացման համար ՌԻՎԿ համար օրենքով նախատեսված տեղեկություններ,

2.16.2. գործարքի (գործարար հարաբերության) պայմանները չեն համապատասխանում հաճախորդի գործարար բնութագրին, ձեռնարկատիրական գործունեության տվյալ բնագավառում սովորաբար կնքվող նման գործարքների (գործարար հարաբերությունների) պայմաններին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

2.16.3. ՌԻՎԿ-ի համար պարզ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքը (գործարար հարաբերությունը) ակնհայտորեն տնտեսական կամ իրավաչափ նպատակ չի հետապնդում,

2.16.4. ըստ իր կատարման տրամաբանության և շարժի (դինամիկայի)՝ գործարքը (գործարար հարաբերությունը) համապատասխանում է միջազգային լավագույն փորձով և լիազոր մարմնի ներկայացրած ուղեցույցներով սահմանված տիպաբանություններին,

2.16.5. ՌԻՎԿ համար ակնհայտ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքի (գործարքների) արժեքը չի գերազանցում 2.3.1 կետով նախատեսված հաշվետվության տրամադրման և նույնականացման համար անհրաժեշտ սահմանաչափը միայն այն պատճառով, որ հաճախորդը ցանկանում է խուսափել ՌԻՎԿ կողմից այդ գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրումից կամ նույնականացումից,

2.16.6. ֆինանսական հաստատությունների համար՝ ֆիզիկական անձը, որը փոխկապակցված է որևէ իրավաբանական անձի հետ, իր անունից այլ իրավաբանական

անծի փոխանցում (տրամադրում) է գումարներ, որն ակնհայտորեն իրականացվում է այդ իրավաբանական անձանց միջև պայմանագրային պարտավորությունների կատարման նպատակով կամ այդ իրավաբանական անձանց միջև այլ կերպ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար,

2.16.7. առկա են գործարքը կասկածելի համարելու համար կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ հիմքեր:

2.17. Հաճախորդներին սպասարկող աշխատակիցը գործարար հարաբերություններում կամ գործարքներում օրենքով, լիազոր մարմնի ներկայացրած ուղեցույցերով նկարագրված չափանիշներին կամ տիպաբանություններին համապատասխան կամ իր կարծիքի հիման վրա ՓԼ/ԱՖ կասկածների բացահայտման դեպքում ներքին իրավական ակտերով սահմանված կանոններով այդ մասին անմիջապես հայտնում է ներքին դիտարկումների մարմնին:

2.18. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ Լիազոր մարմին ներկայացվող հաշվետվությունում նշվում են՝

2.18.1. հաճախորդի, լիազորված անձի, գործարքի մյուս կողմի, կասկածելի գործարքի դեպքում՝ նաև իրական շահառուի տվյալները, ներառյալ՝

ա. ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը և տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ նաև պետական գրանցման վկայականի համարը և հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իրավաբանական անձի համար՝ անվանումը, գտնվելու վայրը, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համար կամ այլ) և, առկայության դեպքում, հարկ վճարողի հաշվառման համարը,

գ. հաճախորդի բանկային հաշվի համարը.

2.18.2. գործարքի առարկայի կամ գործարար հարաբերության նկարագրությունը,

2.18.3. գործարքի գումարը,

2.18.4. գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը:

2.19. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության մեջ նշվում են կասկածի նկարագրությունը և, առկայության դեպքում, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը և (կամ) տիպաբանությունը, ինչպես նաև գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցված, մերժված կամ դադարեցված լինելու կամ ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցված լինելու հանգամանքը:

2.20. Գործարքում կամ գործարար հարաբերությունում հաճախորդի, լիազորված անձի, գործարքի մյուս կողմի կարգավիճակում պետական մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին հանդես գալու դեպքում հաշվետվության մեջ նշվում են միայն այդ մարմնի լրիվ պաշտոնական անվանումը և երկիրը:

ԳԼՈՒԽ 3: ՈՒՎԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՆՎԱՁԱԳՈՒՅՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ, ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԵՎ ՄԱՐՄԻՆԸ

3.1. ՈՒՎԿ-ի հիմնադիրը և գործադիր մարմինը պատասխանատու են ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին արդյունավետ համակարգի ձևավորման համար:

3.2. Խորհուրդ

3.2.1. հաստատում է Ներքին դիտարկումների մարմնի տարեկան ծրագիրը,

3.2.2. անհրաժեշտության դեպքում ներքին դիտարկումների մարմնին հանձնարարում է իրականացնել Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ուսումնասիրություններ,

հաստատում է ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը,

3.2.3. իրականացնում է Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

3.3. Գործադիր մարմինը

3.3.1. ապահովում է հիմնադրի սահմանած՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման քաղաքականության ներդրումը ինչպես նաև դրա արդյունավետ իրականացումը:

3.3.2. ապահովում է Օրենքի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ամբողջական ու արդյունավետ կիրառումը և հսկողություն է իրականացնում դրա նկատմամբ,

3.3.4. նշանակում և աշխատանքից ազատում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցին,

3.3.5. ապահովում է իր աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում պատշաճ ուսուցումը,

3.3.6. կազմակերպում է ներքին դիտարկումների մարմնի գործունեությանն անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովվածությունը,

3.3.7. իրականացնում է Ներքին դիտարկումների մարմնի գործունեության համապատասխանության մասով ուսումնասիրություն,

3.3.8. իրականացնում է Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

3.3. Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված գործառույթները պատշաճ իրականացնելու նպատակով ՌԻՎԿ ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցը պետք է ունենա բարձրագույն կրթություն կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական և նշանակմանը նախորդող 10 տարիների ընթացքում առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ (ֆինանսական ոլորտում կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում):

3.4. Ներքին դիտարկումների մարմնի աշխատակից չի կարող լինել այն անձը, ով օրենքով սահմանված կարգով՝

3.4.1. ունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործության համար,

3.4.2. դատարանի կողմից զրկված է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական կամ իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,

3.4.3. սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ,

3.4.4. ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված է որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,

3.4.5. չի համապատասխանում սույն կանոնակարգի 3.3-րդ կետով սահմանված չափանիշներին,

3.4.6. փոխկապակցված է ՌԻՎԿ ղեկավարների հետ:

3.5. Ներքին դիտարկումների գործառույթը այլ ստորաբաժանման կամ աշխատակցի վրա դնելու դեպքում ստորաբաժանման կամ աշխատակցի աշխատանքային պարտականություններում ՓԼ/ԱՖ ներքին դիտարկումների գործառույթը պետք է հստակ նկարագրված լինի, և բավարար ժամանակ տրամադրվի իրականացման համար:

3.6. Ներքին դիտարկումների մարմնին պետք է անմիջականորեն հասանելի լինեն հաճախորդի հաշիվներին և կատարված գործարքներին վերաբերող բոլոր փաստաթղթերը, և իրավունք վերապահվի գործարար հարաբերությունների (գործարքների), ինչպես նաև հաճախորդների, լիազորված անձանց և իրական շահառուների վերաբերյալ պարզաբանումներ պահանջել այլ ստորաբաժանումների ցանկացած աշխատակցից:

3.7. Ներքին դիտարկումների մարմինը ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված գործառնությունների իրականացման հարցում օժանդակում և խորհրդատվություն է տրամադրում ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցներին:

3.8. Ներքին դիտարկումների մարմինը՝

3.8.1. մշակում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին իրավական ակտերը, դրանք ներկայացնում է հիմնադրի հաստատմանը,

3.8.2. իրականացնում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին իրավական ակտերի արդյունավետության մոնիտորինգ, առաջարկներ է ներկայացնում դրանց արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ,

3.8.3. ապահովում է ՌԻՎԿ անունից լիազոր մարմնին տեղեկությունների տրամադրումը, ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով ապահովում է ՌԻՎԿ-ի կապը լիազոր մարմնի հետ,

3.8.4. կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ,

3.8.5. պահպանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացված վերլուծությունների արդյունքները,

3.8.6. ապահովում է հաճախորդի և գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի գնահատումը,

3.8.7. գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու հարցը, ըստ անհրաժեշտության, քննարկում է սույն կանոնակարգի 2.11.-րդ կետով սահմանված՝ ներքին ազդակ տրամադրած համապատասխան աշխատակցի հետ,

3.8.8. հետևում է գործարար հարաբերությունների ընթացիկ մոնիտորինգին և պարբերաբար վերանայում է տեղեկությունների ճշգրտման ու թարմացման ընթացքը,

3.8.9. կազմակերպում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ներքին ուսուցումը և վերապատրաստումը, իրականացնում է ուսուցման ծրագրերի ընթացքի ու արդյունքների մոնիտորինգ,

3.8.10. իրականացնում է Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ:

3.9. Ներքին դիտարկումների մարմինը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է ՌԻՎԿ կատարած գործարքների և հաստատած գործարար հարաբերությունների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ու աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը Օրենքին, սույն կանոնակարգին և Օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերին: Ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ ներքին դիտարկումների մարմինը հաշվետվություն է ներկայացնում խորհրդին: Հաշվետվությունը պետք է նվազագույնը ներառի՝

3.9.1. պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների թիվը, կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը,

3.9.2. այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն որակվել կասկածելի,

3.9.3. ՌԻՎԿ կասեցրած, իրականացումը մերժած կամ դադարեցրած գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը, յուրաքանչյուր կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության արժեքը,

3.9.4. սառեցված գույքի չափը,

3.9.5. ՌԻՎԿ աշխատակիցների գործողությունների արդյունքում Օրենքի, սույն կանոնակարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքերը,

3.9.6. ըստ անհրաժեշտության այլ տեղեկություններ:

3.10. ՈՒՎԿ-ն պետք փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով պարբերաբար՝ առնվազն կիսամյակը մեկ ուսուցում կազմակերպի խորհրդի, գործադիր մարմնի, ներքին դիտարկումների մարմնի, վարկային գործակալների, ադմինիստրատիվ աշխատակիցների համար: Նոր աշխատակիցների ընդունման դեպքում ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով ուսուցում պետք է կազմակերպվի առաջին երեք ամիսների ընթացքում:

3.11. ՈՒՎԿ-ի կողմից իրականացվող ուսուցման ծրագրերը, դրանց վերաբերյալ բոլոր նյութերը, ինչպես նաև ուսուցման ծրագրերին մասնակցած անձանց անուններն ու ստորագրությունները պետք է առանձին հաշվառվեն և պահպանվեն առնվազն 5 տարի:

ԳԼՈՒԽ 4: ՓԼ/ԱՖ ՌԻՍԿԻ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված՝ ՓԼ/ԱՖ ռիսկը գնահատվում է որպես միջին (ստանդարտ), բարձր կամ ցածր: Ռիսկը գնահատվում է ըստ ռիսկը բնութագրող չափանիշի, իսկ մեկից ավելի չափանիշների առկայության դեպքում՝ դրանց համակցությամբ: Ռիսկի չափանիշները սահմանվում են Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

4.2. Ռիսկը գնահատվում է միջին (ստանդարտ) այն դեպքում, երբ բացակայում են բարձր կամ ցածր ռիսկի չափանիշները:

4.3. Ռիսկը գնահատվում է բարձր այն դեպքում, երբ առկա է բարձր ռիսկի թեկուզ մեկ չափանիշ:

4.4. Ռիսկը գնահատվում է ցածր այն դեպքում, երբ.

4.4.1. առկա են միայն ցածր ռիսկի չափանիշներ,

4.4.2. առկա է միջին (ստանդարտ) ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է սույն կանոնակարգի 4.7.-րդ կետով նախատեսված ցածր ռիսկի գործարք,

4.4.3. առկա է բարձր ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է սույն կանոնակարգի 4.7.-րդ կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված ցածր ռիսկի գործարք կամ սույն կանոնակարգի 4.7.-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված ցածր ռիսկի գործարք, որի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

4.5. Տարբեր ռիսկերի համար բնութագրական մի քանի չափանիշների միաժամանակ առկայության դեպքում ռիսկը գնահատվում է առկա չափանիշներից առավել բարձր ռիսկայինին համապատասխան՝ բացառությամբ սույն կանոնակարգի 4.4.-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետով սահմանված դեպքերի:

4.6. Հաճախորդի հետ գործարար հարաբերության ընթացքում ռիսկի որևէ նոր չափանիշ ի հայտ գալու դեպքում ՈՒՎԿ պետք է վերանայի տվյալ ռիսկի գնահատումը՝ ձեռնարկելով նոր որոշված ռիսկին համապատասխան հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ:

4.7. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ բարձր ռիսկի չափանիշներ են նաև՝

4.7.1. իրավաբանական անձինք կամ կազմավորումները, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,

4.7.2. անվանական բաժնետերեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր ունեցող ընկերությունները,

4.7.3. կանխիկի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող բիզնեսները և գործարար հարաբերությունները,

4.7.4. սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կազմ ունեցող ընկերությունները,

- 4.7.5. անհատականացված բանկային ծառայությունների մատուցումը,
- 4.7.6. առանց առերես շփման գործարքը կամ գործարար հարաբերությունը:
- 4.8. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ ցածր ռիսկի չափանիշներ են նաև՝
- 4.8.1. կյանքի ապահովագրության պայմանագրերը, որոնց դեպքում տարեկան ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը կամ միանվագ ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը,
- 4.8.2. կենսաթոշակային համակարգերի շրջանակում կնքված ապահովագրական պայմանագրերը, եթե դրանք չեն պարունակում հրաժարման մասին դրույթ, և պայմանագիրը չի կարող օգտագործվել որպես գրավի առարկա,
- 4.8.3. Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքի բյուջե կատարվող վճարումները,
- 4.8.4. հանրային ծառայությունների դիմաց կատարվող վճարումները,
- 4.8.5. աշխատավարձի, կենսաթոշակի կամ հայտնի աղբյուրներից ստացվող սոցիալական նպաստների հետ կապված վճարումները:
- 4.9. Բարձր ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները՝
- 4.9.1. օֆշորային երկրում կամ տարածքում գրանցված (գործունեություն իրականացնող) իրավաբանական անձ կամ բնակվող ֆիզիկական անձ հաճախորդը,
- 4.9.2. հաճախորդի գործարար հարաբերության կամ միանգամյա գործարքի կապը այնպիսի պետությունների (տարածքների) հետ (ՀՀ ԿԲ և համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված ցանկերի համաձայն), որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները,
- 4.9.3. հաճախորդի բնակվելը (գտնվելը) 4.9.2. ենթակետում նշված պետություններում (տարածքներում),
- 4.9.4. բարեգործական և շահույթ չհետապնդող կազմակերպությունները,
- 4.9.5. ըստ ներկայացնողի արժեթղթերը (այդ թվում՝ ըստ ներկայացնողի չեկերը), որոնք շրջանառվում են գործարար հարաբերության ընթացքում կամ հանդիսանում են միանգամյա գործարքի առարկա,
- 4.9.6. այն դեպքերը, երբ առաջանում են նույնականացման համար նախկինում ձեռք բերված տվյալների ճշգրտության և համարժեքության վերաբերյալ կասկածներ, այդ թվում՝ իրական շահառուների առկայության և նրանց մասին տվյալների իսկության հետ կապված,
- 4.9.7. այն դեպքերը, երբ հայտնի է դառնում, որ հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատումը կամ գործարքի կատարումը մերժվել է այլ ֆինանսական հաստատության կողմից,
- 4.9.8. այն դեպքերը, երբ առկա է կանխիկ դրամի մեծածավալ շրջանառություն իրականացնող հաճախորդ, գործարար հարաբերություն կամ միանգամյա գործարք,
- 4.9.9. հաճախորդները, որոնց հաշիվներով իրականացվում են միջոցների հաճախակի և անբացատրելի շարժեր դեպի տարբեր ֆինանսական հաստատություններ,
- 4.9.10. քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների, նրանց հետ փոխկապակցված անձանց հետ գործարար հարաբերությունը կամ միանգամյա գործարքը,
- 4.9.11. սահմանափակ թվով հատուկ կատեգորիայի հաճախորդների համար անհատականացված բանկային ծառայությունների մատուցումը,
- 4.9.12. առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատումը կամ միանգամյա գործարքի կատարումը էլեկտրոնային եղանակով կամ թղթակցության կարգով (առանց առերես շփման հարաբերությունների),
- 4.9.13. այնպիսի հաշվով կամ միջոցով գործարար հարաբերությունը կամ միանգամյա գործարքը, որոնցով 6 ամսից ավելի որևէ գործարք չի կատարվել,

4.10. Բարձր ռիսկի չափանիշները որոշելու համար կարող են հաշվի առնվել նաև հետևյալ հանգամանքները՝

4.10.1. հաճախորդը Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ ռեզիդենտ չէ, կամ հաճախորդի նախկին կամ ներկա քաղաքացիությունը կամ ռեզիդենտությունը ՓԼ/ԱՖ առումով բարձր ռիսկ է ենթադրում:

4.10.2. իրավաբանական անձի կառուցվածքը կամ կառավարումը առանց հիմնավոր պատճառի բարդ է,

4.10.3 իրավաբանական անձի մասնակիցներին հնարավոր չէ կամ դժվար է բացահայտել:

4.10.4. հաճախորդ իրավաբանական անձը թողարկում է ըստ ներկայացնողի արժեթղթեր:

4.11.Բարձր ռիսկի չափանիշների առկայությունը որոշվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում: Բարձր ռիսկի չափանիշները պարզելու և գնահատելու նպատակով ՈւՎԿ համադրում է՝

1) հաճախորդին նույնականացնող տվյալները:

2) հաճախորդի գործարար բնութագիրը:

3) հաճախորդի գործարար հարաբերությունները:

4) հաճախորդի միանգամյա գործարքների բնույթը եւ նպատակը:

5) հանրամատչելի աղբյուրներից ստացված տեղեկությունները:

6) այլ հանգամանքներ:

4.12. Անձի՝ քաղաքական ազդեցություն ունենալու փաստը որոշելու նպատակով ՈւՎԿ կարող է իրականացնել հետևյալ գործողությունները՝

4.12.1. հնարավոր հաճախորդներից տեղեկությունների հարցում կամ հաճախորդների ու նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեության բնույթի վերաբերյալ տվյալների ստացում:

4.12.2. հրապարակային տեղեկատվության ուսումնասիրում և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ առկա մասնավոր տվյալների բազաների օգտագործում:

4.13. Առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելիս կամ գործարքներ կնքելիս իրականացվում է հետևյալ լրացուցիչ միջոցառումները՝

4.13.1. հաշվարկների կատարումը միայն անկանխիկ ձևով՝ բացառությամբ վճարային տերմինալների, բանկոմատների միջոցով իրականացվող կանխիկ վճարումների, ՈւՎԿ պահանջում է լրացուցիչ փաստաթղթեր, ինչպիսիք են՝ պայմանագրեր, վճարումների ստացականներ կամ այլ հիմնավորող փաստաթղթեր:

ԳԼՈՒԽ 5: ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

5.1. ՈՒՎԿ պետք է Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում իրականացնի հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն՝ ձեռնարկելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկին համապատասխան միջոցառումները:

5.2. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացը ներառում է հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնելը և նրա ինքնությունը ստուգելը, գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելը, ինչպես նաև գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը) ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը:

5.3. Միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում իրականացվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով սահմանված գործընթացը, որի շրջանակներում ՈՒՎԿ, ի կատարումն այդ կետով և Օրենքի համապատասխան այլ դրույթներով միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում սահմանված

պահանջների, իրականացնում է գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության կանոնավոր միջոցառումներ:

5.4. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով ՌԻՎԿ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.

5.4.1. ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարելով հարցումներ իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,

5.4.2. համադրում է հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,

5.4.3. պարզում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,

5.4.4. ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը հաճախորդի գործարար բնութագրին,

5.4.5. պարզում է հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը,

5.4.6. ձեռնարկում է սույն կանոնակարգով սահմանված այլ միջոցառումներ:

5.5. Բարձր ռիսկի դեպքում իրականացվում է հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրության՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով սահմանված գործընթացը, որի շրջանակներում ՌԻՎԿ, ի կատարումն այդ կետով և Օրենքի համապատասխան այլ դրույթներով բարձր ռիսկի դեպքում սահմանված պահանջների, իրականացնում է գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության խորացված միջոցառումներ: Մասնավորապես, հաճախորդի և արտաքին աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրությամբ լրացվում են Հավելված 1-ով նախատեսված

5.6. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով ՌԻՎԿ բարձր ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ խորացված միջոցառումները.

5.6.1. գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը ստուգելիս պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ (ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր), օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարում է հարցումներ հնարավոր մեծ թվով իրավասու մարմինների և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,

5.6.2. հաճախորդի՝ տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները համադրելիս ընտրում է հնարավորին ավելի երկար կամ մի քանի համադրելի միավոր ժամանակահատված,

5.6.3. հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով,

5.6.4. հաճախորդի գործարար բնութագրին որևէ գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը ստուգելիս պահանջում է դրանց շրջանակներում կատարված գործողությունները լիարժեքորեն հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),

5.6.5. հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելիս պահանջում է դրանց օրինականությունը հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),

5.6.6. ձեռնարկում է սույն կանոնակարգով սահմանված այլ գործողություններ:

5.7. Ցածր ռիսկի դեպքում կարող է իրականացվել հաճախորդի պարզեցված պատշաճ ուսումնասիրության՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով սահմանված գործընթացը, որի շրջանակներում ՈԻՎԿ, ի կատարումն այդ կետով և Օրենքի համապատասխան այլ դրույթներով ցածր ռիսկի դեպքում սահմանված պահանջների, կարող է իրականացնել գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության նվազեցված միջոցառումներ:

5.8. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով ՈԻՎԿ ցածր ռիսկի դեպքում կարող է ձեռնարկել հետևյալ նվազեցված միջոցառումները.

5.8.1. ստուգել գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ հիմք ընդունելով հաճախորդի տրամադրած տեղեկատվությունը,

5.8.2. համադրել հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են հաճախորդի գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,

5.8.3. պարզել հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել միջին (ստանդարտ) կամ բարձր ռիսկայնության հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների հետ կապեր:

5.9. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում դիտանցումը կատարվում է գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը), ընդ որում՝ սույն կանոնակարգի 5.4-րդ և 5.6-րդ կետերի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված միջոցառումները ՈԻՎԿ կոմից ձեռնարկվում են հետևյալ պարբերականությամբ.

5.9.1. տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,

5.9.2. վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում, բացառությամբ սույն կանոնակարգի 5.13-րդ կետով նախատեսված դեպքի:

5.10. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքված տեղեկությունների (բացառությամբ հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների) թարմացումը կատարվում է հետևյալ պարբերականությամբ.

5.10.1. տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,

5.10.2. վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում, բացառությամբ սույն կանոնակարգի 5.13-րդ կետով նախատեսված դեպքի,

5.10.3. երկու տարին մեկ անգամ՝ ցածր ռիսկի դեպքում:

5.11. Ներպետական օրենսդրության նոր պահանջներն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ առկա հաճախորդների նկատմամբ պատշաճ ուսումնասիրության պահանջները կիրառվում են՝ ձեռնարկելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համապատասխան ռիսկի համար նախատեսված միջոցառումները, հետևյալ դեպքերում և ժամկետներում.

5.11.1. հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնելու և նրա ինքնությունը ստուգելու, ինչպես նաև գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելու մասով՝ նոր պահանջներն ուժի մեջ մտնելուց հետո նախքան հաճախորդի հետ առաջին գործարքը կատարելը կամ սույն կանոնակարգի

5.10-րդ կետով նախատեսված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքված տեղեկատվությունը հերթական անգամ թարմացնելիս, եթե մինչև հերթական թարմացումը հաճախորդի հետ գործարք չի կատարվել,

5.11.2. գործարար՝ հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը իրականացնելու մասով՝ նոր պահանջներն ուժի մեջ մտնելու պահից սկսած:

5.12. Առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելիս ՈՒՎԿ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում պետք է նաև պահանջի, որ առաջին վճարումը կատարվի Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի ,աե-,գե ենթակետերով սահմանված պահանջներին բավարարող ֆինանսական հաստատությունում հաճախորդի անվամբ բացված հաշվով:

5.13. Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի ,դե ենթակետով սահմանված ընթացիկ հավելյալ դիտարկումն ընդգրկում է սույն կանոնակարգի 5.9.-րդ կետով նախատեսված միջոցառումները, որոնց իրականացման՝ պարբերականությունը սահմանվում է երեք ամիսը մեկ անգամ:

5.14. Օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված՝ հաճախորդի գործարար բնութագիրը պարզելիս ՈՒՎԿ պետք է հավաստիանա, որ բավարար տեղեկություններ է ձեռք բերել հաճախորդի՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ լինելու հանգամանքը պարզելու համար:

5.15. Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ իրական շահառուի առկայությունը պարզելիս լրացվում է Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարությունը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի: Սույն կետով նախատեսված հայտարարությունը գործարար հարաբերության ընթացքում լրացվում է նաև, երբ ի հայտ է գալիս իրական շահառու, կամ երբ իրական շահառուն փոխվում է:

ԳԼՈՒԽ 6: ՈՒՎԿ ԿՈՂՄԻՑ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ

6.1. ՈՒՎԿ-ն պետք է հաշվառի և պահպանի՝

6.1.1. հաճախորդի նույնականացման տվյալները,

6.1.2. գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները՝ օրենքով սահմանված կարգով,

6.1.3. գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության որոշման նպատակով կատարված ցանկացած վերլուծություն և կատարված այլ գործողությունների վերաբերյալ տվյալներ,

6.1.4. կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև հաշվետվության հիմքում ընկած տեղեկություններն ու հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ հարցի քննարկումների արձանագրությունները ,

6.1.5. կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մասին այն տվյալներն ու ենթադրությունները, որոնց հետ կապված՝ լիազոր մարմնին չի ներկայացվել կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

6.2. ՈՒՎԿ-ն 6.1 կետում թվարկված տեղեկատվությունը հավաքագրում է այնպես, որը ապահովվում է հետազայում դրա օգտագործումը որպես ապացույց: Տեղեկատվությունը ամրագրող փաստաթղթերը պետք է ունենան դրանց ներկայացվող բոլոր վավերապայմանները:

6.3. Տեղեկատվությունը պետք է հաշվառվի: Հաշվառումը պետք է կատարվի դասակարգված տվյալների բազաների միջոցով: Տեղեկատվության հաշվառումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի դրա հիման վրա հնարավոր լինի անհրաժեշտության դեպքում

վերականգնել այն աշխատակցի տվյալները, որն իրականացրել է նույնականացում կամ հաշվառման ենթակա այլ գործողություններ:

6.4. Տեղեկատվությունը կարող է պահվել փաստաթղթային կարգով, համակարգիչներում, էլեկտրոնային կրիչներում:

6.5. ՈՒՎԿ-ն ապահովում է հաշվառված ու պահպանվող տեղեկատվության անվտանգությունը, գաղտնիությունը և կանխում չթույլատրված օգտագործումը, տնօրինումը:

6.6. ՈՒՎԿ-ն ճշտում և թարմացնում է հաճախորդի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվությունը հաճախորդի հետ նոր գործարք կնքելիս և մոնիտորինգների ընթացքում:

6.7. ՈՒՎԿ-ն առնվազն 5 տարի, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար պահպանում է հետևյալ տեղեկատվությունը.

6.7.1. գործարար հարաբերության ավարտից հետո հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները և գործարար թղթակցության տվյալները,

6.7.2. գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները, որոնք հնարավորություն կտան վերականգնելու գործարքի (գործարար հարաբերության) իրական պատկերը՝ գործարքի կատարումից (գործարար հարաբերության դադարեցումից) հետո:

6.8. Օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված պարտադիր տեղեկացման և կասկածելի գործողությունների վերաբերյալ տեղեկությունները ներքին դիտարկումների մարմինը էլեկտրոնային եղանակով պահպանում է 5 (հինգ) տարի, իսկ կասկածելի գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները պահպանում է նաև թղթային եղանակով:

ԳԼՈՒԽ 7: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

7.1. ՈՒՎԿ-ն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններն իրականացնում է միայն օրենքով, սույն կանոնակարգով, այլ կարգերով ու կանոնակարգերով, ներքին իրավական ակտերով սահմանված անհրաժեշտ տեղեկությունները ստանալուց և օրենքին, սույն կանոնակարգին համապատասխան գրառելուց հետո:

ԳԼՈՒԽ 8: ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

8.1. Հաճախորդներին սպասարկող աշխատակիցը գործարար հարաբերություններում կամ գործարքներում Օրենքով, Լիազոր մարմնի ներկայացրած ուղեցույցներով նկարագրված չափանիշներին կամ տիպաբանություններին համապատասխան կամ իր կարծիքի հիման վրա ՓԼ/ԱՖ կասկածների բացահայտման դեպքում այդ մասին անմիջապես հայտնում է ներքին դիտարկումների մարմնին:

8.2. Ներքին դիտարկումների մարմինը հաճախորդներին սպասարկող աշխատակցի, այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության կամ իր սեփական դիտարկումների արդյունքում կասկածելի գործարքի բացահայտման դեպքում այդ մասին Լիազոր մարմնին ներկայացնում է կասկածելի գործարքի մասին հաշվետվություն:

8.3. ՈՒՎԿ գլխամասից և կամ առանձնացված ստորաբաժանումներից (ներկայացուցչություններ, մասնաճյուղեր) ներկայացված տեղեկությունները հավաքագրվում, մշակվում, ուսումնասիրվում և ստուգվում են ներքին դիտարկումների մարմնի կողմից և վերջինիս կողմից տեղեկությունները ստանալուց հետո 1 աշխատանքային

օրվա ընթացքում եզրակացություն է կայացվում գործարքը կասկածելի ճանաչելու և լիազոր մարմնին համապատասխան հաշվետվական ձևը ներկայացնելու վերաբերյալ:

8.4. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում (գործառնությունում) կասկածելի գործարքի հիմքեր և չափանիշներ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ը:

8.5. Ներքին դիտարկումների մարմինը նույն օրը, կասկածելի որակված գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը լիազոր մարմնին տրամադրելուց, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցները կամ այլ գույքը սառեցնելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո միայն, տեղեկացնում է գործադիր մարմնին՝ կից ներկայացնելով բոլոր փաստաթղթերը:

8.6. Սույն գլխում նշված ընթացակարգը պահպանվում է նաև այն դեպքում, երբ կասկածելի գործարքը հայտնաբերվել է ուսումնասիրությունների արդյունքում:

8.7. 8.4 կետով սահմանված գործաքների տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

8.7.1. աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

8.7.2. ծրագրա-ապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով,

8.7.3 վիճելի, քննարկման ենթակա դեպքերով և այլն:

**ԳԼՈՒԽ 9: ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՍ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ
ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ**

9.1. ՈՒՎԿ-ն իրավունք ունի փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում մինչև 5 օրով, իսկ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հանձնարարականի ստացման դեպքերում պարտավոր է 5 օրով կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը և այդ մասին անմիջապես Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել լիազոր մարմնին:

9.2. Լիազոր մարմինն իրավասու է գործարքը կամ գործարար հարաբերությունը մինչև 15 օրով կասեցնելու՝ տրամադրված հաշվետվությունների, ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հարցումների, վերահսկող և քրեական հետապնդում իրականացնող մարմինների ներկայացրած կամ այլ տեղեկությունների վերլուծությունների հիման վրա: Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի անմիջապես՝ այն ՈՒՎԿ կողմից ստանալու պահից:

9.3. Այն դեպքում, երբ լիազոր մարմինը սույն գլխի 1-ին կամ 2-րդ մասով կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ ծանուցում է տրամադրում քրեական հետապնդում իրականացնող մարմնին, կասեցման ժամկետը համարվում է երկարաձգված ծանուցման տրամադրման պահից 15 օրով, որի մասին լիազոր մարմինը տեղեկացնում է ֆինանսական հաստատությանը: Կասեցման ժամկետը երկարաձգելու հիմնավոր անհրաժեշտության դեպքում քրեական հետապնդում իրականացնող մարմինը 15 օրվա ընթացքում տեղեկացնում է լիազոր մարմնին: Կասեցման ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության մասին լիազոր մարմնին չտեղեկացնելու դեպքում կասեցումը վերանում է:

9.4. ՈՒՎԿ կամ լիազոր մարմնի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը, մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչել

միայն լիազոր մարմինը՝ իր նախաձեռնությամբ կամ ՌԻՎԿ միջնորդությամբ, եթե պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ:

9.5. Այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել Օրենքի 16-րդ հոդվածի 1-7-րդ մասերով նախատեսված պարտականությունները, կամ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման հանձնարարականի ստացման դեպքերում ՌԻՎԿ պետք է մերժի գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը և դիտարկի այն սույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն կասկածելի որակելու հարցը:

9.6. Այն դեպքում, երբ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա գործարար հարաբերություն հաստատելուց հետո հնարավոր չէ իրականացնել այդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պարտականությունները, ինչպես նաև այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված պարտականությունները կամ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման հանձնարարականի ստացման դեպքերում ՌԻՎԿ պետք է դադարեցնի գործարքը կամ գործարար հարաբերությունը և դիտարկի այն Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն կասկածելի որակելու հարցը:

9.7. Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում, ինչպես նաև Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված նշված ցանկերում ներառված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը անմիջապես և առանց նշված անձանց նախապես տեղեկացնելու ենթակա է սառեցման ՌԻՎԿ կողմից:

9.8. Սառեցումը վերացվում է միայն լիազոր մարմինի կողմից՝ գույքը սխալմամբ սառեցվելու, ինչպես նաև քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից սառեցված գույքի վրա կալանք դնելու դեպքում: Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ կետով նշված անձանց գույքի սառեցումը նաև վերացվում է, եթե բացահայտվում է, որ այն անձը, որի միջոցները սառեցվել են, հանվել է ահաբեկչության հետ կապված անձանց ցանկից:

9.9. ՌԻՎԿ ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու դեպքում՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը անմիջապես որակում է կասկածելի և տրամադրում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

9.10. Սույն կանոնակարգի իմաստով սառեցման առարկա չի կարող լինել այն գույքը, որը պատկանում է բարեխիղճ երրորդ անձին, այսինքն՝ այն անձին, որը գույքը այլ անձի հանձնելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ դրանք օգտագործվելու են կամ նախատեսվում են օգտագործել հանցավոր, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով, ինչպես նաև այն անձին, որը գույքը ձեռք բերելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ դրանք ստացվել են հանցավոր ճանապարհով:

ԳԼՈՒԽ 10: ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

10.1 Մշտադիտարկման նպատակն է բացահայտել և կանխել կասկածելի գործարքները, ապահովել կասկածելի գործունեության վաղաժամ հայտնաբերումը և համապատասխան միջոցառումների իրականացումը:

10.2 Մշտադիտարկման մեխանիզմներ՝

10.2.1 Ավտոմատացված մոնիթորինգային համակարգի գործարկում: Գործարքների վերաբերյալ տվյալները մշտապես վերլուծելու և կասկածելի գործարքների մասին ազդանշաններ գեներացնելու նպատակով գործարկվում է մոնիթորինգային համակարգ՝ ուսումնասիրելու ՄԱԿ ԱԽ կողմից հրապարակվող ցանկերի համընկնումները,